

բաղացի լինելը»: Ուզում էին հայերին գուրս քշել կայարանից, բայց աղերսանքով մնացին գիշերը և նրանց պահում էին հայ զինուորները:

Առաւօտը պատահեց մի բաղացի, եկաւ և Մեօրոք քահանան, որ եկւոր հայերին շայով տաքացնելուց յետոյ առաջնորդեցին գէպի Սօլօլակ՝ Ղորղանեանի տունը, ուր ճաշարանն էր և ուր արդէն կային զանազան վայրերից հաւաքուած փաստական հայեր աւելի քան 300 հոգի:

1906 թուի յունուարի 3-ին բացուեց երկաթուղին և յունուարի 15 այս բաղացիք ցրուեցին, ոմանք Հաւլաբար կրօզէնցոց մօտ, ոմանք Շամշագին և ոմանք Գանձակ և այս տեղերից կրկին Բագա:

Կր ԸԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Քաջբերունի



## Կ Ա Ն Տ Ի Ի Մ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Այս երկու կարևոր կէտերում Կանտը ընդհանուր բան չունի նախ-Կանտեան փիլիսոփայութեան հետ: Սակայն նախ-Կանտեան երկու փիլիսոփայական անտիթեզերի մէջ կան ճշմարիտ սկզբունքներ, հարկաւոր էր նրանց համագրել մի նոր սիստեմ կառուցանելու համար: Եթէ խորը քննենք, կը տեսնենք, որ ողջիօնալիզմը ճիշտ է, երբ նա պնդում է, թէ հանրապարտադիր օրգան բանականութիւնն է անհրաժեշտ իմացութեան աղբիւրը և որ նա իբրև այդպիսին չի կարող հատ հատ ըմբռնութիւններից արտածուել: Էմպիրիզմը ճիշտ է, երբ պնդում է, թէ ճանաչելին պիտի տրուի միայն զգայութեամբ, որը իրականութեան միակ հաղորդիչ օրգանն է (բայց ոչ ինքնին իրականութիւն): Ռացիօնալիզմը ճիշտ է դատում իմացութեան կարևոր մասի աղբիւրի մասին, էմպիրիզմը՝ նրանց գործադրութեան մթնոլորտի մասին (Փալկենբերգ): Այս կէտերում նրանք իրար ոչ թէ հակասում, այլ լրացնում են:

Ռացիօնալիզմը միշտ պնդում է գիտութեան անհրաժեշտութեան հանրարժէքութեան վրայ, ուստի առաջարկում է դեդուկցիան: Էմպիրիզմն ամենից առաջ հոգ է

տանում լայնացման և ճոխացման մասին, ուստի առաջարկում է ինդուկցիան: Այդ երկու պահանջներին էլ բաւարարութիւն են տալիս a priori սինթետիկ դատողութիւնները: Էմպիրիզմը մասնանշում է մի իմացութեան միմիայն պասսիւ կողմի վրայ, ուսցիօնալիզմը միմիայն ակտիւ. մենք թէ պասսիւ ենք, թէ ակտիւ, երկուսն էլ ճիշտ են, բայց միակողմանի (Ֆալկենբերգ):

Ռացիօնալիզմի և էմպիրիզմի այս հակադրութեան հաշտեցումով ինքն ըստ ինքեան լուծւում է նաև օբեկտիւիզմի և սուբեկտիւիզմի, նոմինալիզմի և ունիվերսալիզմի, դոգմատիզմի և սկեպտիցիզմի հակադրութիւնները: Առաջին երկուսի հակադրութիւնը վերացւում է նրանով, որ նախ բացարձակ օբեկտիւութիւն (ռէալիզմ) չկայ: Նախկին օբեկտիւիզմի հասկացողութիւնը իր ամբողջ նկարագրով փոխւում է սուբեկտիւ օբեկտիւութեան. — անհրաժեշտութիւնն ու հանրապարտադրութիւնը, որ նախկին օբեկտիւիզմի բնորոշ յատկանիշն էր համարւում, աւելի հիմնաւորուած և հասկանալի կը լինի սուբեկտիւ հոգի վրայ: Նոմինալիզմի և ունիվերսալիզմի հարցը լուծւում է նրանով, որ իրականութեան բովանդակութիւնը բազմազան է և մասնակի, իսկ ձեւը ընդհանուր. բովանդակութիւնն ստացւում է զգայութեամբ, ձեւը տրւում է բանականութեամբ: Ինչ չափով, որ մասնակին ու ընդհանուրը, ձևն ու բովանդակութիւնը և դրանց օրգանները՝ զգայութիւնն ու բանականութիւնը իրար ոչ թէ հակասում, այլ լրացնում են, նոյն չափով էլ նոմինալիզմն ու ունիվերսալիզմն են իրար լրացնում: Ինչ վերաբերում է դոգմատիզմին և սկեպտիցիզմին, դրանք երկուսն էլ վերանում են, երբ հարցը դրւում է քննադատական հոգի վրայ. կրիտիցիզմը փոխարինում է դրանց:

Իսկ սպիրիտուալիզմի և մատերիալիզմի հակադրութիւնը շուտ է տրւում ֆենօմենալիստական դուալիզմի, ներքին զգայութեան (հոգեկան երևոյթների) և արտաքին զգայութեան (նիւթական աշխարհ) աշխարհների հակադրութեան:

Այսպիսով կանոնը ամբողջ փիլիսոփայական միտքը յեղաշրջում է և մի մարդկային մտքի բոլոր մանր ու խոշոր փեռեկտումներին վերջ է տալիս, կանգնելով բոլորից բարձր մի գերագոյն տեսակէտի վրայ, որ ինքը նոր էր կռել, այն էլ այնպիսի վիժխարի վարպետութեամբ, որ իրաւամբ կարելի է նորան նոր դարու ամենամեծ փիլիսոփան համարել, իսկ նրա յեղաշրջումը ամենամեծ յեղափոխութիւնն ու դարագլուխը մտքի պատմութեան մէջ:

### Գլուխ III. հարցադրութիւն եւ մեթոդ.

#### 1. Իմացաբանութեան կապը փիլիսոփայութեան միւս օրջաններին (էսիկա, էստէսիկա)

Երևք հիմնական հոգեկան կարողութիւն կայ ըստ կանտի,—այդ կլասիֆիկացիան նա վերցրել է իւր ժամանակի հոգեբանութիւնից,— իմացական, կամական և զգացական: Դրանց բոլորին էլ յատուկ են սինտետիկ apriori սկզբունքներ, որոնք մեր գիտական, բարոյական և էստետիքական աշխարհայեացքի հիմքն են կազմում: Այդ apriori սինտետիկ դատողութիւնները իմացութեան մէջ հանդէս են գալիս իբրև անհրաժեշտ և հանրանշանակ կապակցող և համագորդ սկզբունքներ, որոնց կապակցութիւնը սակայն հիմնուած չէ կապակցելիք գաղափարների ֆորմալ տրամաբանական առնչութեան վրայ: Կամեցողութեան շրջանում apriori սինթեզն այն է, որ մի կողմից կամքին վերագրում են անհրաժեշտ և ընդհանուր յարաբերութիւն գէպի որոշ իրեր, միւս կողմից կամային գործողութեանց վերաբերեալ գործադրում ենք «բարի» և «չար» պրեգիկատները, որոնք ծանրարժէք և անհրաժեշտ բնոյթ ունին և գնահատում են գործնական քայլերը: Զգայութեանը յատուկ apriori սինթեզն այն է, որ նա «գեղեցիկ» և «աղեղ», «նպատակայարմար» և «աննպատակայարմար» պրեգիկատներով որակում է որոշ իրերի հաճելի և տհաճ տպաւորութեան հանրարժէք և ընդհանուր բնոյթը, նոքա էստետիկական անհրաժեշտ դատողութիւններ են: Ըստ այսմ էլ քննադատական փիլիսոփայ-

փայութիւնը բաժանուում է երեք մասի. — տեսական, գործնական և էստետիկական սինտետիկ a priori դատողութիւնների քննադատութեանց. իսկ Կանտի ամբողջ սիստեմը բաժանուում է տեսական (իմացաբանութիւն), գործնական (բարոյագիտութիւն) և էստետիկական ուսմունքների: Առաջինը շարադրուած է «Զուտ բանականութեան քննադատութեան», երկրորդը «Գործնական բանականութեան քննադատութեան» իսկ երրորդը «Դատողութեան կարողութեան քննադատութեան» մէջ. այդ երեք քննադատութիւնները հիմնական դրքերն են, որոնց շուրջն այնուհետև խմբուում են միւսները, մօտ կամ հեռու կապ ունենալով դրանց հետ: (Վիլլելբրանդ):

Արդ՝ ինչ է կեդրոնը փիլիսոփայական այդ երեք շրջանների. կոյ արդեօք մի կէտ, որից բղխէին այդ երեքն էլ: Այդպիսի հարց դնել Նախ—Կանտեան փիլիսոփայութեան համար խիստ հասկանալի էր, սրովհետև նա ունէր մի սկզբունք, — լինի այն մետաֆիզիքական կամ էմպերիկ հոգեբանական, այդ միւսոյն է, որից այնուհետև իբրև մի նիւթից արտածում էր և՛ գոյաբանութիւնը, և՛ իմացաբանութիւնը, և՛ բարոյագիտութիւնը և ընդհանրապէս ամբողջ երևոյթները: Սակայն այդ երջանիկ և հեշտ միջոցը չի կարող բաւարարութիւն տալ քննադատական մտքին: Վերոգրեալ հարցը նոյն իմաստը չունի Կանտի վերաբերմամբ, որ վաղուց էր ազատուել մատերիալ մօնիզմից, ինչ որ կարող էր ունենալ Նախ—Կանտեան գոգմատիզմի համար. հարցը չպիտի հասկանալ այս կերպ, թէ կայ մի մատերիալ սկզբունք, որից նիւթապէս բղխէին բարին, ճշմարիտն ու գեղեցիկը. այլ այս կերպ, — որն է այն ֆորմալ համայնապարիակ սկզբունքը, որ կապակցում է փիլիսոփայական այդ երեք շրջանները և մի ընդհանուր սիստեմ դարձնում, որոնց մի մարդ կարող է դաւանել: Հարց դնել, թէ ո՞րն է Կանտի փիլիսոփայութեան կեդրոնը, նշանակում է հարց դնել, թէ ո՞րն է այն ֆորմալ սկզբունքը, որից, որպէս ֆոկուսից ճառագայթէին բարին, գեղեցիկը և ճշմարիտը: Այդ ֆոկուսը

չի կարող կանտի ինդիվիդուալ անձնաւորութիւնը լինել, ինչպէս կարծում է Վինդելբանդը, մի քայլ մտենալով ճշմարտութեանը: Կանտի անձնաւորութիւնը իբրև անցող և մատերիալ մի սկզբունք չի կարող համարուել կեդրոնական սկզբունք կրիտիզմի. այդ կետրոնական ֆոկուսը կարող է լինել միայն «Ես»ը ընդհանրապէս, «Ես»ը որպէս օբեկտիւ և ֆորմալ սկզբունք: Այդ «Ես»ը կանտը տրամադիր է համարել մարդկային սեռային «Ես»ն ընդհանրապէս\*): Բարու, ճշմարտի և գեղեցկի աշխարհներ այդ «Ես»ի գործունէութեան տարբեր շրջաններն են, նրա եռաճիւղ գոյութեան արտայայտութիւնները: Հնարաւոր չեն նիւթական անցումներ անել դրանց մէջ և հարկաւոր էլ չէ, ինչպէս հարկաւոր չէ ձայնի և գոյնի մէջ անցումներ անել և մէկը միւսից արտածել. բաւական է ցոյց տրուի, որ դրանք միևնոյն մակարդակի վրայ գտնուող համասեռ բաներ չեն, որ իրար հակասեն: Այստեղ օգնութեան է հասնում ֆորմալ մոնիզմը, որով վերացում է հակասութիւնը դրանց միջև: Ըստ իմացութեան չի կարելի պնդել (ինչպէս և չի կարելի բացասել) կամքի ազատութիւնը, հոգու անմահութիւնը, Աստուծոյ գոյութիւնը, որովհետև երևոյթները աշխարհում, ուր նա է իշխում, չկան դրանք, իսկ թէ բացի երևոյթների աշխարհից, կայ ինքնին իրերի աշխարհ, ուր դրանք իրողութիւններ են, կմնայ իմացութեան համար միշտ պրոբլեմատիկ: Կամքը կարող է ասել իմացութեանը. — քո ստեղծած աշխարհում օրէնսդիրը դու ես, քեզ համար իրական է միմիայն ընական պատճառականութիւնը և ոչ թէ պատճառականութիւն ազատութեան միջոցով, ինքնին իրականութիւնը, ուր գոյութիւն ունի հոգու անմահութիւն, բարոյական աշխարհակարգ, որի գլուխն է Աստուած, քեզ համար մատչելի չէ. բայց բարու աշխարհում, որ միմիայն ինձ է մատչելի, այդ բոլորը իրա-

\*) Այս «Ես»ի հասկացողութիւնը չպիտի շփոթել տրանսցենդենտալ ինքնազիտակցութեան Ես-ի հետ, որը զուտ տրամաբանական իմացական սկզբունք է, իսկ այս «Ես»ը ե՛լ իւացական, ե՛լ բարոյական, ե՛լ գեղազիտական:

կան են. մեր աշխարհները տարբեր են, ուստի մենք կուուելու և հակասելու ոչինչ չունինք:

Իսկ զգացմունքն էլ իւր apriori սինտետիկ օրէնքներով նկարակերտում է իւր աշխարհը, որ մատչելի չէ միւսներին: Այլ բան են ճիշտն ու սխալը, այլ՝ չարն ու բարին և այլ՝ գեղեցիկն ու տգեղը. բայց մէկի գոյութիւնը միւսին չի ժխտում, ինչպէս չի ժխտում կապոյտը կարմրին, ձայնը գոյնին և լին: Այն ճանապարհով, որով ընթանում էր Նախ-Կանտեան մատերիալ-մոնիստական ուղիղը, երբէք չէր կարելի վերացնել դարաւոր անտագոնիզմը կրօնի և գիտութեան, հաւատի և իմացութեան միջից: Կանտը իմացութիւնը սահմանափակեց երեւոյթներով, որպէս զի լայն բացուին հաւատի դռները, նրանց մատնանիշելով իրենց տարբեր ասպարէզները, և նրանց սահմանագծերը վերջնականօրէն զատելով վերջ տուաւ նրանց գժտութեանը: Ընդունելով բարու, ճշմարտի և գեղեցկի մարդկային կամեցող, իմացող և զգացող «Ես»ը, այլ և այն, որ չի կարելի կամքն ստորագասել և արտածել պատկերացումների աշխարհից, ոչ էլ զգացմունքը կամքից, Կանտը բարձրանում է վոլունտարիստական և ինտելեկտուալիստական նիւթական մոնիստական միակողմանի ուղղութիւններից դէպի այսպէս կոչուած ֆորմալ «սինտետիկ մոնիզմը» որը հոգեբանական ուղղութիւններից ներկայուս ամենագիտականն է և ամենաճշմարիտը:

## 2. Հարցադրութիւն.

Մենք համառօտակի պիտի տանք այստեղ Կանտի տեսական փիլիսոփայութիւնը, կամ, որ Կանտի մօտ նոյնանում են, իմացաբանութիւնը, որը Կանտը շարագրել է «Զուտ բանականութեան քննութեան» մէջ:

Մենք տեսանք ներածութեան մէջ, որ հարցը չպիտի դնել այսպէս. — Հնարաւոր է իմացութիւնը, կամ այլապէս, որո՞նք են իմացութեան անհրաժեշտ հիմունքները, որոնք հնարաւոր են դարձնում իմացութիւնը:

Ըստ Կանտի մեր ամբողջ իմացութիւնը արտայայտ-

ւում՝ է դատողութիւններով, դատողութիւններով մի սիստեմով: Դատողութիւնը ըստ Կանտի է երկու պատկերացումների կապակցութիւնը գիտակցութեան մէջ: Այդ կապակցութիւնը երկու կերպ կարող է լինել՝ անալիտիկ և սինտետիկ: Անալիտիկ կը լինի մի դատողութիւն, երբ նրա պրեդիկատը սուբեկտի մէջ արդէն կանխաւ պարունակուում է, թէկուզ ոչ այնքան պարզ գիտակցուած: Պրեդիկատը մի նոր հանգամանք չի աւելացնում սուբեկտին, այլ նրա գաղափարի պարունակի մէջ արդէն մտածուող միտքն է պարզում և յատկապէս մատնանշում, անալիտիկ գատողութիւնն այդ պատճառով անկարող է գաղափարների տուեալ պարունակից դուրս գալ և ճոխացնել, ընդարձակել մեր իմացութիւնը, գաղափարների նեղ պարունակից նոր շրջաններ թեւակոխելով: Այդպիսի մի գատողութիւնն է օրկ. — «մարմինները տարածական են», որովհետեւ տարածականութիւնը նախօրօք արդէն մարմնի գաղափարի մէջ մտածուում է: Բոլոր անալիտիկ գատողութիւնների հիմնական սկզբունքը հակասութեան օրէնքն է. — (անտարած մարմին, ըստ Կանտի հակասական գատողութիւնն է,) որովհետեւ ընդհանուր դրական անալիտիկ գատողութեան պրեդիկատը արդէն մտածուում է սուբեկտիւ օրինակի մէջ, ուստի չի կարող պրեդիկատը սուբեկտիւ վերաբերմամբ ժխտել առանց հակասութեան: Բոլոր անալիտիկ գատողութիւններն ապրիորի են, որովհետեւ նոցա ապացուցանելու համար կարիք չկայ փորձի դիմելու, քանի որ պատրաստի գաղափարն ինքը, թէկուզ նա փորձից ծագած և փորձի շնորհիւ կազմուած լինի, բաւական է ապացուցանելու գատողութեան անհերքելի ճշմարտութիւնը:

Մենք ունենք նաև գատողութիւններ, որոնք մեր իմացութեան ամենարժէքաւոր մասն են, և հիմնուած չեն հակասութեան օրէնքի վրայ, որոնք ճոխացնում և լայնացնում են մեր իմացութեան հորիզոնը և անհունօրէն ընդունակ են զարգանալու, և ոչ թէ անալիտիկ գատողութիւնների նման պոտյոտ գալու գաղափարների պարու-

նակները պարզելու նեղ շրջանում. դրանք օրինատե տիկ  
 դատողութիւններն են: Սինտետիկ կոչում են այն  
 դատողութիւնները, որոնց պրեդիկատը կցում ենք սու-  
 բեկտին իբրև մի նոր բան, որ սուբեկտի պարունակի մէջ  
 չկայ: Այդպէս դատողութիւն է օրինակ՝ «Մարմինները  
 ծանր են», մարմնի գաղափարի մէջ չկայ ծանրութիւն,  
 դա մի բոլորովին նոր հանգամանք է, որ մենք կցորդում  
 ենք մարմնին, որի մէջ մենք կանխաւ չենք մտածում ծան-  
 րութիւնը \*):

Սինտետիկ դատողութիւնները երկու կարգի են բա-  
 ժանւում. — անհրաժեշտ և հանրարժէք և փորձնական

\*) Սինտետիկ ապրիորի դատողութեանց խնդիրը խիստ կարեւոր է,  
 սրովհետեւ կրիտիկայի խնդիրն էլ հենց այն է, թէ հնարաւոր են սինտ-  
 ապրիորի դատողութիւններ եւ ի՞նչպէս, ուստի աշխատենք մի քիչ մօ-  
 տիկից դիտել եւ զգույ նրանց եւ անալիտիկ դատողութեանց տարբերու-  
 թիւնը: Ամանց կարծիրով միեւնոյն դատողութիւնը կարող է անալիտիկ  
 լինել մի մարդու համար, սինտետիկ՝ մի ուրիշի համար, կամ միեւնոյն  
 մարդու համար, միայն թէ զանազան ժամանակներում: Այս փաստը չի  
 խախտում եւ նսեմացնում անալիտիկ եւ սինտետիկ դատողութեանց տար-  
 րերութիւնը: Բայց եթէ ունենք այդպէս են կարծում, նրանց չի կարելի  
 գոհացնել, պատասխանելով. թէ այն բռպէին, երբ կանխաւ մտածում  
 ես պրեդիկատը սուբեկտի մէջ, դատողութիւնը կը դաւնար անալիտիկ-  
 իակ եթէ ո՞չ, սինտետիկ, եթէ «կանխաւ» ի խնդիր է դրում, պէտք է  
 ասել, որ նախքան արտայատելը «ձուն կլոր է» դատողութիւնը, ես  
 արդէն պէտք է իմանամ այդ ասելով «ձուն կլոր է»՝ դատողութիւնը, ես  
 լուծում եմ արդէն ունեցած պատրաստի ձուի գաղափարը եւ դատողու-  
 թիւն կազմում, ուրեմն, կարելի է ասել, որ ժամանակապէս գաղափարը  
 կանխում է դատողութեանը: Ամէն դէպքում, երբ մի բան ենք վերա-  
 դրում միւսին, կամ բացասում միւսի վերաբերմամբ, պէտք է նախքան  
 դատողութեան մէջ այն մարմնացնելը՝ կանխաւ գաղափարի մէջ պատ-  
 րաստի ունենանք. դատողութիւնը յետագայ ակտ է, որ արդէն կուտակ-  
 ուած գաղափարների պաշարը մշակում, վերլուծում պարզում է, եթէ  
 «կանխաւ» ժամանակական խնդիր դրուի, այդ դէպքում կամ բոլոր  
 դատողութիւնները պիտի անալիտիկ լինէին եւ կամ, եթէ գաղափարնե-  
 րի եւ դատողութեանց իրար կանխելու խնդիրը իրաւամբ նկատուի որպէս  
 նման այն խնդրին, թէ արդեօք ձո՞ւն է առաջ եղել, թէ հաւը. (քանի  
 որ նոյն ինքը գաղափարը կազմելու համար հարկաւոր են դատողական  
 ապերացիաներ, ինչպէս եւ այդ դատողական ապերացիաները կարծես

պրեզումպտիւ, apriori և aposteriori: Փորձնական բոլոր դատողութիւնները սինտետիկ են, և որովհետև նրանց ապացուցանելու համար պիտի դիմենք փորձին, ուստի նրանք aposteriori են:

գործ պէտք է ունենան որոշ պատրաստի պաշարի հետ, երկուսն էլ «աւասարապէս կարելի է եւ պնդել եւ ժխտել», դժուար եւ անմիտ աշխատանք կլինի վճռել՝ արդեօր տուեալ դատողութիւնը թերեւս իմ մէջ, սինտետիկ է թէ անալիտիկ, մանաւանդ որ կարելի է խիստ վիճելի համարել, թէ արդեօր զազափարն այգալիսի արմատական տարբերութիւն ո՞ւնի դատողութիւնից: Երբ ես մտածում եմ թղթի մասին, չեմ գիտակցում նաեւ սպիտակութիւնը, այլ եւ, որ կարելորն է, «է՛ն», թէկուզ խիստ անուշադիր եւ խաւար ձեւով, իսկ դատողութիւնն արդեօք այլ բան աւելացնում է. քան այն, որ մենք մեր ուշքը սեւեռում ենք պարզ չգիտակցուած «է»ի վրայ եւ նրան զիտակցութեան շեմից բարձրացնում ենք. . . Մինչեւ անգամ կարելի է ասել, որ զազափարը կազմելու պրոցէսը սինտետիկ է, իսկ դատողութիւնը, որ սոսկ յայտարար է կազմուած պատրաստի պրոզուկտի, անալիտիկ է, բայց այն այս դէպքում հիմք չկայ անջատելու եւ տարբերութիւն դնելու զազափարի կազմաւորման պրոցէսի եւ դատողութեան մէջ...

Այսպիսով երբ «կանխաւ» է «ուշի» խնդիրն է մէջ բերում հարցը աներեւակայելի չափով խճճուում, բարդանում եւ անլուծելի է դառնում: Ժամանակի խնդիրը ոչ—տրամաբանական՝ մի ու է ալ հանգամանք է եւ իբրեւ այգալիսին հոգեբանական խնդիր է եւ զուրկ է իմացաբանական արժէքից, Պէտք է տարբերութեան այլ կրիտերիում գտնել, այդ կրիտերիումն այն է, որ անալիտիկ դատողութիւնները հիմնուած են հակասութեան օրէնքի վրայ, սինտետիկները՝ ոչ: Ինքնատչնչացումն է անալիտիկ դատողութեանց չափը. երբ ասեմ  $A=A$  դա կը լինի անալիտիկ դատողութիւն, որովհետեւ, եթէ ասեմ  $A=ոչ-A$  մի եւ նոյն դատողութեան մէջ ինձ հակասած կլինիմ: Անալիտիկ մնայ սուղ դառնում է սոսկ տաւտոլոգիա: Մինչդեռ սինտետիկ դատողութիւնները հակասութեան օրէնքի վրայ չեն հիմնուած: Օր. «երբ ես ասում եմ» մարմինները տարածական են, սա իսկապէս սինտետիկ դատողութիւն է եւ ոչ թէ անալիտիկ, ինչպէս մտածում է Կանտը, որովհետեւ նախ՝ այլ բան է մարմին, այլ՝ տարածականութիւն, դրանք իրար չեն ծածկում, հաւասար չեն. իսկ եթէ մենք չենք կարող ընդունել անտարած մարմնի գոյութիւնը, այդ նրանից է, որ մենք անկարող ենք պատկերացնել (եւ ոչ՝ մտածել) անտարած իր. դա պատկերացման՝ ուրեմն եւ սինտետիկ անհրաժեշտութիւն է եւ ոչ թէ տրամաբանական անհրաժեշտութիւն. երկրորդ մտածելի են անտարած իրեր (թէեւ ոչ

Սինտետիկ բայց միևնոյն ժամանակ ապրիորի դատողութիւններ են (որովհետեւ նրանց ազատացոյցը չի հիմնուած մասնակի փորձի վրայ) մատեմատիկական դատողութիւնները:  $5 + 2 = 7$  դատողութիւնը հիմնուած չէ տրամաբանական հակասութեան օրէնքի վրայ.  $5 - 1$  և  $7 - 1$  գումարի գաղափարի մէջ  $12 - 1$  չի պարունակուած իբրև պրեդիկատ:

Այդ գումարի գաղափարն ինչքան վերլուծենք, չենք գտնի նրա մէջ  $12$ : Այդ դատողութիւնը կազմելու համար պիտի պատկերացնել նախ  $7$  միութիւն ( $7$  իր, կէտ) և այդ  $7$  միութիւնը յաջորդաբար կցել մի այլ միութիւն ևս՝  $5$ , և սահելով ամփոփել այն՝ գիտակցութեան և ստանալ մի այլ նոր միութիւն՝  $12$ . Իսկ այդ ամբողջ պրօցէսը սինտետիկ է:

Նոյնպիսի ապրիորի սինտետիկ դատողութիւններ են նաև երկրաչափական դատողութիւնները: Որ ուղիղ գիծը երկու կէտի միջի ամենակարճ ճանապարհն է, այդ սինտետիկ դատողութիւն է, որովհետեւ գծի ուղիղ լինելու գաղափարի մէջ չի պարունակուած կարճ, այլ բան է կարճութիւն, այլ՝ ուղղութիւն, — մէկը գծի մեծութեանն է վերաբերում, միւսը սրակին. մենք այդ երկու հանգամանքները կցելիս՝ բարձրանում ենք գաղափարների պարունակներին:

պատկերացնելի) ինքնին իրերը անտարած չեն կարող լինել: Մարմնի գաղափարը մի համադրութիւն է զանգուածութեան, տարածականութեան, քաշի եււն- այդ տարրերը սինտետիկ կերպով միացած են իրար հետ գաղափար կազմելու համար, եւ երբ ես ասում եմ՝ մարմինները տարածական են, դրանով ուզում եմ ասել, որ մարմնի միւս տարրերին կցում եմ նաեւ տարածականութիւնը եւ յատուկ գիտակցում եմ այդ կցումը. այսինքն այլապէս սինթէզ կատարում:

Կանտի այն բնորոշումը. թէ անալիտիկ դատողութիւնները նոյնաբանութիւն (տաւտօլիդիա) են եւ հիմնուած են միմիայն հակասութեան օրէնքի վրայ, մնում է որպէս ճիշտ ձեւաբանութիւն, բայց նրա բերած օրինակները ցոյց են տալիս, որ նա տրամադրուած է «Կանխաւ» ժամանակական խնդիրը մէջ բերել. մինչդեռ զուտ տրամաբանօրէն պիտի բնորոշել:

Այդ դատողութիւնը կազմելիս մենք գիմում ենք անմիջական պատկերացողութեանը. — նախ պատկերացնում ենք երկու կէտ, ապա մի ուղիղ գիծ դրանց միջև և տեսնում, որ դա միաժամանակ և ամենակարճն է, և հնարաւոր էլ չէ այլ կարճ գիծ դրանց միջև, որովհետև նոքա կը ձուլուէին ի մի գիծ:

Սակայն անալիտիզը բոլորովին չի վտարոււմ մատեմատիկայից, ինչպէս և տոհասարակ բոլոր սինտետիկ գիտութիւններից. ինքն իրեն չը հակասելը ընդհանուր օրէնք է ամէն իմացութեան: Մատեմատիկայի բուն հիմքերը և կառուցումները սինտետիկ են. սակայն որ և է սինտետիկ թէզիս, կարելի է հասկանալ նաև հակասութեան օրէնքի համաձայն, բայց ոչ թէ ինքն ըստինքեան, այլ միայն այն դէպքում, երբ նախադրում է մի ուրիշ սինտետիկ դատողութիւն, որից նա բղխում է իբրև հետեանք:

Սինտետիկ *a priori* են նաև զուտ բնագիտական դատողութիւնները: Դեռ Գալիլէոյ Հիւմը պատճառականութեան գաղափարը վերլուծելով դտաւ, որ A-ի պարունակի (պատճառ) վերլուծութիւնը թոյլ չի տալիս, որ մի B (հետեանք) նրանից բղխի: Սրանից Հիւմը եզրակացնում էր, թէ անօրինական է պատճառականութեան օրեկտիւ (հանրարժէք) նշանակութիւն վերագրել, Կանտը սակայն կանգ չառաւ այդ կէտի վրայ, նա գտնելով, որ անհրաժեշտութիւնը երբէք կախուած չէ դատողութեան անալիտիկ լինելուց, թէ կան սինտետիկ, բայց միևնոյն ժամանակ և անհրաժեշտ և հանրանշանակ դատողութիւններ, ուստի նա չմերժեց, այլ հաստատեց պատճառականութեան և ընդհանրապէս բնագիտութեան հիմնական սկզբունքների ապրիորութիւնը: Որ սուբստանցիայի քանակը բնութեան մէջ ոչ աւելանում, ոչ պակասում է, այդ չի բղխում սուբստանցիայի գաղափարից: Բնագիտական այդ հիմնական դատողութիւնն ևս սինտետիկ միաժամանակ և *a priori* է:

Սինտետիկ են բոլոր մետաֆիզիքական դատողութիւն-


ները, որովհետև նրանք պնդում են իրերի գոյութիւնը: Իսկ էկսիստենցալ գատողութիւնները միշտ սինտետիկ են, որովհետև մի բան իբրև գաղափար լոկ մի միտք է իմ մէջ, իսկ իբրև գոյութիւն ունեցող իրականութիւն նա աւելի է քան մի սոսկ միտք, այդ աւելին հենց գոյութիւն ունենալն է: Երբ մենք պնդում ենք մի գաղափարի գոյութիւն ունենալու վրայ, դրանով գաղափարին կցում ենք մի նոր հանգամանք (իրականութիւն), որը գաղափարի, իբրև այդպիսու, մէջ չկար: Գոյութիւն ունենալն այսպիսով գաղափարի որոշիչը չէ: Այսպիսով մետաֆիզիքական դատողութիւնները (էքսիստենցիալ) սինտետիկ են: Նրանք փորձի վրայ չեն հիմնուած և փորձից չեն բղխում, այս չափով նրանք ապրիորի են, բայց ապրիորութեան միւս յատկանիշները՝ անհրաժեշտութիւն և հանրապարտադրութիւն չունին:

Ուրեմն այն հարցը, թէ ինչպէս է հնարաւոր իմացութիւնը, հաւասար է՝ ինչպէս են հնարաւոր սինտետիկ և անալիտիկ դատողութիւնները: Անալիտիկ դատողութեանց հնարաւորութիւնը կանտոն ընդունում է սկզբից և եթէ, նրանք կասկածից դուրս են և արգէն հիմնուած են նախ-կանտեան փիլիսոփայութեան միջոցով, կրիտիցիզմն այդ ընդունում է իբրև նախադրեալ: Մնում է հարցնել՝ ինչպէս են հնարաւոր սինտետիկ դատողութիւնները *aposteriori* սինտետիկ դատողութիւնը մասնակի գիտութիւնների գործն է և կազմում են էմպիրիկ բովանդակութիւնը մեր իմացութեան հիմքը կազմող ապրիորի սկզբունքները, կրիտիցիզմը դրանցով էլ չի զբաղւում, յանձնարարելով նոցա մասնակի գիտութիւններին: Բուն հարցը մնում է ուրեմն՝ ինչպէս են հնարաւոր սինտետիկ ապրիորի իմացութիւնները: Իսկ որովհետև երեք այդպիսի գիտութիւն կայ.— Զուտ մատեմատիկա, զուտ բնագիտութիւն և բնազանցագիտութիւն, ուստի գլխաւոր հարցը բաժանւում է երեքի.— 1. ինչպէս են հնարաւոր 1 զուտ մատեմատիկան, 2 զուտ բնագիտութիւնը և 3 մետաֆի-

զիկան. 1-ը հայեցողական գիտութիւն է, վերջին երկուսը մտածողական, եթէ նայելու լինենք իմացական երկու հիմնական կարողութիւնների տեսակէտից, ուստի առաջի հարցը քննուած է տրանսցենտենտալ էստէտիկայում (ուսմունք զգայական հայեցողութեան մասին) վերջին երկուսը-տրանսցենտենտալ տրամաբանութեան մէջ:

(շարունակելի)

Ե. Ե.



### III.

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԲ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անգրկովկասում երբորդ տեղը բռնում են թուրք-թաթարական ժողովուրդները: Թէև սրանք թուական առաւելութեամբ գերազանցում են միւս ժողովուրդներին, բայց կուլտուրայէս շատ յետամնաց են: Թուրք-թաթարները ընկինքը չեն, այլ գաղթել են Ասիայի խորքերից. սրանք սելջուկների, թաթարների, թէմուրլէնկի, հորզաների մնացորդներից են: Բոլոր այս ժողովուրդները դաւանում են իսլամական կրօնը և դրա համաձայն էլ կարգաւորել են իրենց հասարակական-քաղաքական և մասնաւոր կեանքը: Եւ նրանց կեանքն ներկայ պայմանները համարեա թէ նոյն են, ինչ որ դարեր առաջ էին: Քանի որ այս ժողովուրդները իրենց թէ հասարակական և թէ մասնաւոր կեանքում առաջնորդւում են Ղորանի և շարիաթի սկզբունքներով, սրանց մասին կարելի է նոյնն ասել, ինչ որ ընդհանուր է Իսլամը դաւանող բոլոր ժողովուրդներին:

«Այն կրօնը, որին մենք Իսլամ անունն ենք տալիս, շատ խոր ազդեցութիւն ունի իւր հետևողների վրայ: Թէպէտև Իսլամի ժողովուրդները տարբեր ազգերի և ծագման են պատկանում, սակայն իսլամական աշխարհը ներկայացնում է մի միութիւն, աւելի մեծ չափով, քան քրիստոնէականը. այնպէս որ մենք չենք կարող շքնդունել, որ այդ կրօնը իւր հետևողների վրայ շատ խոշոր ազդեցութիւն է գործում, եթէ նոյն իսկ վիճելի համարուի այն, թէ կլիմայական և ազգազբաւական պայմանները այդ ձևակերպման սրչափ աջակցել են: Այս ազդեցութեան մասին այնքան էլ չի կարելի կասկածել, քանի որ